ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 35

«13» 04 2018 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N 26 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի նախկինում ընդունած ներքին իրավական ակտերը «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների համապատասխանեցնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2017 թվականի մարտի 13-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում դատախազների միջև աշխատանքային պարտականությունների բաշխում կատարելու վերաբերյալ կարգադրության, ինչպես նաև դրա փոփոխման և (կամ) լրացման վերաբերյալ կարգադրության օրինակելի ձևերը սահմանելու մասին» N 26 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 4-րդ կետում «**Երևան քաղաքի և մարզերի դատախազներին**» բառերը փոխարինել՝ «**Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազներին**» բառերով,

2) 4-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Տալ համապատասխան դատախազնությունների դատախազների (այսուհետ՝ դատախազությունների դատախազներ) միջև աշխատանքային պարտականությունների բաշխում կատարելու վերաբերյալ կարգադրություններ:»;

3) 5-րդ կետից հանել «**Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին**» բառերը,

4) 5-րդ կետի 1-ին ենթակետում «դատախազությունների» բառը փոխարինել «կառուցվածքային ստորաբաժանումների» բառերով,

5) 5-րդ կետի 2-րդ ենթակետում «Դատախազության» բառը հանել:

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ